

Ե.13.04 «Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ենթակայացված Արթուր Գագիկի Լալայանի

«ԵՐԿՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄՊԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԱՐՏԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՐԹԱԿԻ ՄԵԱԿՈՒՄԸ» թեմայով

ատենախոսության վերաբերյալ

Կ Ա Ր Ծ Ի Ք

Ա. Գ. Լալայանի ատենախոսությունը նվիրված է հաշվողական ենթակառուցվածքից անկախ երկրի դիտարկման (ԵՐ) տվյալների մշակման ընդլայնվող համալիր համակարգի նախագծմանը, որը համատեղում է տվյալների պահուցները ամպային և բարձր արտադրողականությամբ ենթակառուցվածքների հետ: Այս նպատակին հասնելու համար դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- Կառուցել ընդլայնվող, ասանց սերվերի, տվյալների պահուցների ու ամպային և բարձր արտադրողականությամբ ենթակառուցվածքների հետ փոխգործունակ, հաշվողական ենթակառուցվածքից անկախ ԵՐ տվյալների մշակման համակարգ:
- Մշակել ԵՐ տվյալների մշակման համար բաշխված հաշվողական կլաստերի ընտրության բազմաշափանիչ օպտիմալացման մեթոդ, որը ուղղված է ապահովելու ըստ պահանջի հաշվողական ռեսուրսների ընկալելով հաշվի առնելով տարբեր չափանիշներ, մասնավորապես, արտադրողականությունը և ծախսերը:
- Գնահատել մեծածավալ ԵՐ տվյալների բաշխված մշակման վրա տվյալների սեղմման մեթոդները՝ ազդեցությունը՝ հավասարակշռությունն հաստատելով պահեստավորման խնայողության և մշակման արագության բարելավման միջև:

Չի կարելի ասել, որ ստացված արդյունքները լիակատար պատասխանում են հետազոտման հետ կապված բոլոր հարցերին: Մինևույն ժամանակ դրանք միանշանակ կնարավորություն են տալիս եզրակացնել, որ ատենախոսության մեջ առաջարկված է նորոյն պարունակող ամփոփ լուծում արդիական և կիրառական կարևոր նշանակություն ունեցող խնդրի համար:

Առաջին գլխում վերլուծվում են թեզի հետ կապված աշխատանքները և մասնանշվում եղած մոտեցումներին բնորոշ թեթույունները: Գլխի սկզբում բերված են հասկացությունները, որոնք օգտագործվում են թեզում: Այնուհետև բերված գրականության վերլուծությունը բավարար լրիվությամբ չի արտացոլում առաջարկված լուծումների առավելությունները՝ դիտարկվող խնդիրներում:

Մասնավորապես, ոչ բավարար չափով 1. կատարված համեմատությունը նման խնդիրների լուծման համար նախատեսված այլ համակարգերի հետ:

Հաջորդ գլուխներում նկարագրված են վերը թվարկված արդյունքները:

Ատենախոսությունը ներկայացված է մանրամասն: Միևնույն ժամանակ, կան շարադրման հետ կապված էական թերություններ, որոնց թվում պետք է նշել

1. Հասկանալի է, որ բազմաչափանիշ օպտիմալացման ժամանակ պետք է օգտագործվի ԼՎԻԽԻՍԻՎ մեթոդ, սակայն, միևնույն ժամանակ, անհրաժեշտ է կատարել առաջարկի հիմնավորումը, մասնավորապես, հայտնի ձևաչափով հիմնավորել մեթոդի մատչելիությունը, ներկայացուցչականությունը, ինչպես նաև խարսխվածությունը և ճշգրտման հնարավորությունը (availability, representativeness, as well as anchoring and adjustment): Միևնույն, աշխատանքում այդ հիմնավորումները կամ թերի են, կամ բացակայում են: Կարելի է որոշակի եզրակացություններ անել ինքնուրույն, բայց դա բավականին ժամանակատար է և չի հանդիսանում ընթերցողի պարտականություն:

2. Գոյություն ունեցող մեքենայական ուսուցման տարբեր մոտեցումների և ալգորիթմների վերլուծությունը և աշխատանքում տվյալների սելման համար օգտագործված մեքենայական ուսուցման ալգորիթմի ընտրության հիմնավորումը չափազանց սակավ է հեղինակի հետ նույն եզրակացության հանգելու համար:

3. Աշխատանքում «արտադրողականության օպտիմալացված որոշումների կայացման ծառայությունը» ներկայացված է, որպես արդյունք՝ հակառակ ղեկավարում այլ ենթահամակարգը չպետք է լիներ բնոգրկված ատենախոսությունում: Միևնույն համակարգի չլ արդյոք արդյունքը հանդիսանում է գոյություն ունեցող լուծումների հատուկ համակցում թե նաև ի յուրմ գոյություն ունեցող լուծումների առաջարկված են որոշակի սևիական լուծումներ:

4. Ատենախոսության և սեղմագրի մեջ օգտագործվում են մի շարք արտահայտություններ, որոնց դժվար է հասկանալ կամ տերմինաբանական և լեզվական տեսանկյունից կամ դժվար է համաձայնակ դրանց հետ Օրինակ, առաջին գլխի եզրակացությունում գրված է «this section provides a comprehensive exploration of EO data»՝ հեղինակը չի կարող այդպիսի եզրակացություն անել՝ դա գրավասների գործն է:

Նշենք նաև, որ սեղմագիրը գրվում է մասնագետների համար, որոնք անպայման չէ, որ լինեն նեղ մասնագետ սովյալ բնագավառում:

5. Կան թագմաթիվ սխալներ և լեզվի վրիպակներ, բաց թողած հապավու մներ և անգլերեն, և հայերեն ու ռուսերեն գրված մասերում: Առանձնապես, «այքի է բնկնում» ռուսերեն գրված ամփոփումը:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում կատարված աշխատանքի արժեքը, բայց նապես նվազեցնում են աշխատանքի հնչեղությունը: Միևնույն ժամանակ աշխատանքն արդիական է, պարունակում է կարևոր գործնական խնդրի

ամփոփ լուծում և կարող է կիրառվել որպես արդյունավետ ծրագրային  
ենթակառուցվածք ԵՂ տվյալները մշակելու համար:

Հիմնական արդյունքները տպագրված են, սեղմագրի բովանդակությունը  
լիովին համապատասխանում է առեւտրայինությանը:

Արթուր Լալայանի աստիճանությունը համապատասխանում է Ե.13.04  
մասնագիտության գծով ներկայացվող թեկնածուական աստիճանությունների  
պահանջներին, իսկ հեղինակը արժանի է տեխնիկական գիտությունների  
թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Ֆիզ.մաթ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր



Ս.Վ. Շուքուրյան

15.12.2023

ԵՊՀ ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի գիտական ղեկավար ՀՀ ԳԱԱ  
ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Սամվել Կիմի Շուքուրյանի ձեռքի ստորագրությունը հավաստում  
էմ:

ԵՊՀ գիտական քարտուղար՝



Սովհաննիսյան